# ԹԱՄ... ՓՈՐՈՏԱՆ

## (ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳԻՏԵԼԻՔ)

(*Շար. տես. Բզմ.* 1919 *էջ* 348)

ՇԵՇՏԵՐՆ *ու* ԿԷՏԵՐԸ՝ *որքան ալ չընչենի նշանախեցիկներ ըլլան՝ ըստ երեւոյթի, սակայն երբ անոնց կատարած դերերը ի նկատի առնենք՝ պիտի համոզուինք լիովին՝ թէ կը պարտինք անոնց հետ մեծ ուշադրութեամբ վարուիլ։ Շա՛տ կարեւոր պաշտօնեաներ են անոնք (դժբախտաբար ընդհանրապէս արհամարուած)։*

*Անշուշտ ոչ ոք կրնայ խորհիլ թէ լոկ գրի մը յապաւումը կամ յաւելումը կամ փոփոխումը ներելի ըլլայ՝ կամ սակաւարժէ.* [*Բո՛ւն. Խուն, Հուն, Մուն, Տուն, Քուն,* — *Անօրէն, Տնօրէն....*]։

*Ինչպէս որ ներելի չէ ամբողջ բառի մը կամ լոկ տառի մը փոփոխումը, նմանապէս չէ՛ ներելի (որովհետև չեշտերն ու կէտերն ալ գիրեր են) շեշտի մը կամ կէտի մը աղաւաղումը։ Ջուարթօրէն համոզկեր ըլլալու համար մեր նուաստ կարծիքը, կ'ուզենք յիշել հոս այն զաւեշտական մանրադէպը որ վերջերս տեղի ունեցաւ։*

*Գաղղիոյ Նամակատանց և հեռագիրներու պաշտօնեայ մը, իւր գլխուն եկած փորձանքը ստիպուեցաւ խոստովանիլ քանի մը ընկերներու՝ որոնք կը պատմէին իրեն թէ՝ յաճախ հեռախօսի մէջ Նամակատանց պաշտօնեայ անուանած էին իրենք զիրենք որպէս զի հեռաձայնի օրիորդները աւելի փոյթեռանդօրէն ծառայէին իրենց։*

— *Ատո՛ր համար,* — *բացագանչեց վերոյիշեալ պաշտօնեան,* — *ես ալ՝ երբ իմ տիտղոսներովս կը ներկայանամ, անոնք կը պատասխանեն. «Ե՞հէ՛, զո՞վ կ'ուզես խաբել... մենք այդ խաղերը լաւ գիտենք»։*

— *Բայց աւելի զուարճալին կայ,* — *յարեց նա,* — *այդ չարաճճի օրիորդները՝ տեսէք թէ ուրիշ անգամ ինչ փորձանք բերին գլխուս։ Օր մը՝ Շամբէրի պիտի երթայի։ Իմ այնտեղ հասնիլս ուզեցի հեռագրով իմացնել։ Ես գրած էի. «Խնդրեմ պատրաստել, վաղը կէսօր երեսուն, երկու ճաշ»։ Բայց Շամբէրի հասնելով՝ ապշեցայ մնացի, որովհետև ճաշարանին մէջ պատրաստուած գտայ երեսուներկու բաժին, և կարգադիրը ինձ ըսաւ. «Կէս ժամէ ի վեր՝ ճաշը պատրաստ է,- Տէ՛ր պաշտօնեայ, բայց Ձեր հրաւիրեալները դեռ չերևցան»։*

— *Իմ հրաւիրեալնե՞րս... բայց ես ոչ զոք հրաւիրած եմ։*

— *Ներեցէք, Տէ՛ր, սակայն մեզի հեռագրած էիք որ շատուոր էք,* — *պատասխանեց կարգադիրը և հանեց հեռագիրը ցոյց տուաւ.*

*«Խնդրեմ պատրաստել, վաղը կէսօր, երեսուներկու ճաշ»։*

*Այլեւս շատ պարզ է (ստորակէտի մը) խնդիրը... և անոր արժէքը։*

Զ. ՏՈՒՆ, *ք. տող.*

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1850 | *Հարանց,* | *հարսանց,* | *եղբարց,* | *որդւոց,* | *հանուրց* | *Հայոց* | *վրէժխնդիրք՝* |
| 1858 | *Հարանց* | *հարսանց* | *եղբարց* | *որդւոց,* | » | » | » |
| 1867 | » | » | » | » | » | » | » |
| 1898 | » | » | » | » | » | » | *վրէժխրնդիրք՝* |
| 1912(*բ.*) | » | » | | | » | » | » |

© National Library of Armenia

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1901 | Հարանց՝ | հարսանց՝ | եղբարց՝ | որդւոց, | հանուրց | Հայոց | վրէժխընդիրք. |
| 1908(բ.) | » | » | » | » | » | » | » |
| 1908(Հ.) | Հարանց, | հարսանց, | եղբարց, | որդւոց, | հանուրց | Հայոց | վրէժխնդիրք. |

Ջ. ՏՈՒՆ, գ. տող.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1850 | Թինդս | առեալ | երթամք | յասպարէզ | քաջաց. |
| 1858 | » | » | » | » | » |
| 1867 | » | » | » | » | » |
| 1898 | » | » | » | » | » |
| 1912(բ.) | » | » | » | » | » |
| 1901 | Թինգս | » | » | » | » |
| 1908(բ.) | Թինդս | » | » | » | » |
| 1908(Հ.) | » | » | » | » | » |

Ջ. ՏՈՒՆ, դ. տող.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1850 | Ցերկնից | հնչին | ձայնք | արեան | սիրելեաց. |
| 1858 | » | հընչին | » | » | » |
| 1867 | ՑՈՒՇԻԿ | ՀԸՆՉԵՆ | » | » | » |
| 1898 | » | » | » | » | » |
| 1912(բ.) | » | » | » | » | » |
| 1901 | Ցերկնից | հընչեն | » | » | » |
| 1908(բ.) | Ցուշիկ | » | » | » | » |
| 1908(Հ,) | Ցերկնից | հնչեն | ձայն | » | » |

Ջ. ՏՈՒՆ, ե. տող.

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1850 | Սօսափիւնք | վերինք | արհաւիրք | յերկրէ |
| 1858 | » | » | » | » |
| 1867 | » | ՑԵՐԿՆԻՑ | » | » |
| 1898 | » | » | » | » |
| 1912(բ.) | » | » | » | » |
| 1901 | » | վերինք՝ | » | » |
| 1908(բ.) | » | յերկնից՝ | » | » |
| 1908(Հ.) | » | վերինք, | » | » |

Ջ. ՏՈՒՆ, զ. տող.

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1850 | Քաջացս | օժընդակ | ըզՊարսն | հերքեսցէ։ |
| 1858 | » | » | ըզՊարս | » |
| 1867 | » | » | ըզՊարսն | » |
| 1898 | » | » | » | » |
| 1912(բ.) | » | » | » | » |
| 1901 | » | օժանդակ՝ | ըզպարս | հերքեսցէ, |
| 1908(բ.) | » | » | ըզՊարս | » |
| 1908(Հ.) | Քաջացն | օժանդակ, | ըզպարս | » |

© National Library of Armenia

Է. ՏՈՒՆ, ա. տող.

1850 Ո՜ն անդր 'ի բաց 'Հայկեան հողոյ հսկայազանց և սրբոց՝
1858 » » ի բաց Հայկեան » Հսկայազանց և սրբոց
1867 » » » » » » » » սրբոց՝
1898 » » » » » » » » »
1912(բ.) » » » » » » » » »
1901 » » » » » » » » սրբոց
1908(բ.) » » ի բա՛ց » » » » սրբոց,
1908(Հ.) » » » » Հայկեան հողոց հսկայազանց և սրբոց,

Է. ՏՈՒՆ, բ. տող.

1850 Ի բա՛ց Ջոլիր չըւառական մոխրապաշտիցըն պղծոց,
1858,-67,-98 և 1912(բ.) (վերնոյն պէս) » պըղծոց.
1901 Ի բա՛ց Ջոլիր չուառական » »
1908(բ.) » » » » »
1908(Հ.) » » չւառական մոխրապաշտիցն պղծԱց։

Այս տողը՝ դիտաւորեալ աղաւաղումով կրած է նաև Հ. Գ. Ն.-ի «Հայկական Մենամարտը» գրքոյկին մէջ. (տպ. Վենետիկ – Սուրբ Ղազար, 1919, երես 100) զարմանալի է, սակայն, որ առանց ծանօթութեան, առանց ընդգծումի.

Է. ՏՈՒՆ, գ. տող.

1850,-58,-67,-98, 1912(բ.), 1901, 1908(բ.) ամենքն այ՝
Դաշտք մեր մերժեսցեն զոսկրոտին անգամ,
1908(Հ.) » » » զոսկըրոտիքն անգամ

Է. ՏՈՒՆ, դ. տող.

1850 և 1908(Հ.) Արիւնք վըկայից զճապաղիան անժամ, (տարբերակով)
1858,-67,-98, 1912(բ.), 1901, 1908(բ.), ամենքն այ՝
Արիւնք վըկայից զճապաղիան անժամ.
» » » անժամ,

Է. ՏՈՒՆ, ե. տող.

1850 Ոտք ընդ դիս տոռնեալ դարձցին 'ի փախուստ,
1858 Ոտն » » » » ի »
1867,-98, 1912(բ.) » » » » » » »
1901 » » » » » » փախուստ
1908(բ.) » » » » » » փախուստն
1908(Հ.) ՈՐՆ » » » » » փախուստ,

Է. ՏՈՒՆ, զ. տող.

1850,-58,-67,-98, 1912(բ.) Մատնակուրծք ընդ Հայս հայհոցին հեռուստ։
1901 և 8(բ.) [Նոյնպէս. բայց միայն մնացուած վերջակէտը։]
1908(Հ.) Մատնակուրծք ընդ հայս հայհոցէն հեռուստ։

(Շարունակելի)

Հ. ԳՐՍ. ԱՅՏԸՆԵԱՆ

© National Library of Armenia